«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Աբրահամյան Տաթևիկ

Մանկապարտեզ՝ «Արարատ համայնքի Արմաշ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……....3

Գլուխ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ……5

1.1. Ամանոր…….. 6

1.2. Ծնունդ /Աստվածահայտնություն/……7

1.3. Տեառնընդառաջ……7

1.4. Բարեկենդան……9

1.5. Մեծ Պաս……...10

1.6. Ծաղկազարդ……10

1.7. Սուրբ Զատիկ……...11

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ……...13

2.1. Ծիսական խաղերի իրականացում……14

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ……...16

Տնօրենի դիտարկում……..18

Եզրակացություն……19

Գրականության ցանկ……20

Ներածություն

Հայոց ազգային գաղափարախոսության նպատակը հայ ժողովրդի գոյապահպանումն է ու զարգացումը: Ազգի գոյապահպանման առաջին հիմնապայմանն անկախ ամբողջական հայրենիքի առկայությունն է, երկրորդը՝ անկախ պետականության առկայությունը, երրորդը՝ ազգային և հոգևոր մշակույթի համակարգի առկայությունը: Ազգային մշակույթն ազգային դաստիարակության հիմնական լամպն է:

Ներկայումս ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հայոց ազգային և եկեղեցական տոներին ու կազմակերպմանը:

Հետազոտական աշխատանքս կրում է «Ազգային տոների և ծեսերի» կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Այս թեման ընտրելիս հաշվի եմ առել դրա արդիականությունը:

Ներկայիս հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական ազգային նորմերի ճիշտ արժեքավորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Հետազոտության նպատակը՝ Ուսումնասիրել ազգային և եկեղեցական տոների ու ծեսերի կազմակերպումը մանկապարտեզում՝ այն դիտարկելով որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց: Յուրաքանչյուր մանկավարժ, ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի և բարոյական արժեքները բարձր պահող անհատներ:

Անձի բազմակողմանի զարգացման համար կարևոր է նրա մեջ ձևավորել բարոյական, գեղարվեստական, հոգևոր, մշակութային արժեքների ընկալումը: Քանի որ այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական: Մանկավարժության համար խնդիր է դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության հենքի վրա:

Հետազոտության խնդիրները

1. Բացահայտել ազգային տոների բովանդակությունն ու նշանակությունը,
2. Պարզաբանել ազգային տոների կազմակերպումը Հայաստանի տարբեր գավառներում,
3. Ուսումնասիրել ծիսական խաղերը՝ որպես դաստիարակության միջոց,
4. Հիմնավորել, որ ազգային տոների ու ծեսերի կազմակերպումը հանդիսանում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյուավետության բարձրացման միջոց։

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Մշակույթը չէր պահպանվի և սերնդե-սերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի կրոնում, կենցաղում:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնի և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական աչքերով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատմական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ:

Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ ժողովրդի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է:

Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի հարստություններ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն:

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսակներից: Բնական կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցված մշակույթը: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր

100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում։ Ուսումնասիրողները փաստում են, որ հայ ժողովուրդը վաղնջական ժամանակներում ունեցել են արևի, կրակի, ջրի ու հողի պաշտպանմունքին նվիրված հանդիսությունները։

Թատերագետները մեկնաբանել են ժողովրդական տոների ժամանակ կատարվող ծիսական արարողությունները, ինչպես օրինակ Վարդավառը՝ նվիրված անձրևաբերության և ջրի Աստված Վարդին (ըստ Ս.Ս.Լիսիցյանի), լարախաղությունը՝ Սուրբ Կարապետի հովանավորությամբ, Բարեկենդանի կատակախաղերը, պտղաբերությանը նվիրված ծեսերը և այլն։

Ազգագրական ու գեղարվեստական գրականության միջոցով մեզ հասած գլխավոր տոներն են՝ Նավասարդը կամ Նոր տարին, Բարեկենդանը, Տյառնընդառաջը, Համբարձման տոնը և Վարդավառը։ Քրիստոնեական տոներից էին Սուրբ Ծնունդն ու Զրօրհնեքը, Սուրբ Սարգսի տոնը, Ծաղկազարդը, Զատիկը և ալն։

1.1. Ամանոր

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայերի մեջ ընդհանրացել է ոչ վաղ անցյալում։

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին գարնանային գիշերահավասարի օրը։ Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրը դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը՝ ակնկալելով բերքառատ տարի։

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը։ Մինչև 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ։

Հիշատակվում է տոների տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին գլուխ, Նոր տարի, Կալոնտար։ Նոր տարուն նախորդող գիշերն հայտնի է Լոլեր գիշեր։

1.2. Ծնունդ /Աստվածահայտնություն/

Նոր տարուն հաջորդում են Ծնունդ (Աստվածահայտնություն), Զրօհնեք (Մկրտություն) տոները։ Մեր եկեղեցին Սուրբ Ծնունդը նշում է հունվար 6-ին։ Այդ օրը մատուցվում է Սուրբ Պատարագ և մարդիկ իրար ողջունում են ասելով. ,, Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի,,։

Համաձայն եկեղեցական ավանդության Քրիստոսը Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա 30 տարին։ Այդ պատճառով Հայոց եկեղեցին Սուրբ ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում է միևնույն օրը։ Հետաքրքիր է, որ ճրագալույցի Ս.Պատարագ տարին ընդամենը 2 անգամ է մատուցվում՝ Ս.Ծննդյան և Ս.Հարության տոներին։ Հունավարի 6-ին՝ Ս.Ծննդյան Պատարագից հետո, կատարվում է նաև Զրօրհնեքի արարողությունը։ Զուրն օրհնվում է սուրբ Խաչով, Սուրբ Ավետարանով և Մյուռոնով։ Հավաքվածները անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում են իրենց ձեռքերը, քսում մարմնի հիվանդ մասերին՝ համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց։ Այս հանդիսությունը նկատի ունենալով՝ ժողովուդը այդ տոնն անվանել է ,, Զրօրհնեք,, կամ ,, Խաչը ջուրը քցել,,։

Հունվարի 5-ի երեկոն բոլոր հայ ընտանիքները թաթախման երեկո էր, երբ ժամերգությունից վերադառնալով, պասը բացում էին ծննդյան տոնին ընդունված ճաշատեսակներով։ Ժամերգությունից տուն դարձողներն իրենց հետ տանում էին այնքան մոմ, որքան անդամ կար տվյալ ընտանիքում։ Ընտանիքի յուրաքանչյուր անդամի առաջ վառում էին նրա համար նախատեսված մոմը։

1.3. Տեառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո։ Այն անշարժ տոն է։ Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու։ Այստեղից էլ տոնի անունը« Տեառնընդառաջ՝ Տիրոջն ընդառաջ։ Տոնական հանդիսությունները, սակայն

ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Հեթանոսական կրոնների մեջ մեծ տեղ էր գրավում կրակի պաշտամունքը: Կրակը խորհրդանիշն էր Արևի և Լույսի, ինչպես նաև՝ ջերմության:

Կրակը համարվում էր նվիրական սրբություն: Ընտանեկան բույնը, երդիկը կոչվում է նաև օջախ, ծուխ: Սովորաբար Տյառնընդառաջի հրավառությունը վերագրվում է հայոց Տիր, ինչպես նաև Միհր աստծուն: Տիրը երազների մեկնիչն էր և պաշտպանը՝ դպրության ու արվեստի, իսկ Միհրը մարմնավորում էր կրակի ու լույսի ուժը: Տոնի գլխավոր նպատակն էր՝ կրակի միջոցով ազդել սառնամանիքների վրա և զորացնել արևի ջերմությունը: Արարողությունները եկեղեցում սկսվում են երեկոյան ժամերգությամբ, որից հետո արգելվում է «Լույս զվարթ» շարականը: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն:

Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Քահանան, կարգը կատարելով, իր մոմով առաջինը վառում էր դեզը, նրանից հետո իսկույն վառում էին նորապսակները: Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով: Դեզը վառելու միջոցին հրացաններով կրակում են, որոնց ձայնից շները վախենում են և մի կողմի վրա փախչում: Փախած կողմով էլ որոշում են այդ տարվա հողային առատությունը: Շիրակում և Բասենում էլ դեզը վառելու իրավունքը տրված էր նորապսակներին: Վաղարշապատում և շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը դըրընդեզի տոնին հրավիրում էր աղջիկներին և հարսներին: Քավորը բռնում էր նորապսակ տղայի ձեռքից, որն էլ բռնած էր լինում նորահարսի ձեռքից, և երեք անգամ պտտում դեզի շուրջ, ապա երեք անգամ թռնում էին խարույկի վրայից: Կրակի վրայից թռնելը նպատակ ուներ ազատվել չլավից (ոչ լավ, չար բան): Քանի դեռ կրակը վառվում էր, կանայք մի սկուտեղի վրա լցրած փոխինդը, աղանձը, չամիչը, ընկույզը, կարմրացրած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում էին, պտտվում կրակի շուրջը, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում: Տարեկան երկու

անգամ՝ Տյառնընդառաջին և Ս. Սարգսին շաղախած փոխինդ ճաշակելն ուղղակի անհրաժեշտություն էր:

1.4. Բարեկենդան

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:

Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը:

Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր:

Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային, ինչպես նաև ամենաերջանկաբեր, խրախճանք, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի և ուրախության երկու շաբաթ: Այդ օրերին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում: Ուննոր ընտանիքից շատերի տանը հավաքվում էին մերձավորները և հարևանները: Մորթվում էին ոչխարներ, մթերվում խմիչքներ, մրգեր, հրավիրում էին հեքիաթասացներ, աշուղներ:

Բարեկենդանին՝ տեղի էին ունենում խնամախոսություններ, նշանադրություններ և հարսանեկան հանդեսներ, որոնք այդ տնտեսական օրերին կապվում էին պտղաբերության օրերին կապվում էին պտղաբերության ծեսերի հետ: Երիտասարդները ,, Հարսանիք,, էին խաղում: Խեղկատակների զգեստներ կրող տղաները ամուսիններ ձևանալով կատակախաղեր էին կազմակրպում:

Կազմակերպվում էին նաև ծիսական խաղեր։ Մասնակցում էին մոգերը, սարկավագները և վարդապետները։

1.5. Մեծ Պաս

Ըստ երևույթին Մես Պասը քրիստոնեության հաստատումով փոխարինել է հայկական գարնանային Նավասարդին։ Մեծ Պասի առաջին օրվա ամենակարևոր իրադարձությունը Ակլարիզի կամ Ախլոճի Երևան գալն էր և թոնրատան երդիկից կախվելը, որը իբր պատժում է պասը չպահող երեխաներին (տեղ-տեղ ծերունու տեսք ուներ)։ Նրա պարզած թևերից քարեր էին կախում և միակ ոտքին ամրացված սոխ վրա Մեծ Պասի յոթ շաբաթները խորհրդանշող յոթ փետուր խրում։ Այն կախելու ժամանակ երեխաները երգում էին ,, Ակլարիզ չվանը վիզ, եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս,,։

Շատ ավանդությունների՝ Ակրալիզը Մեծ Պասի օրը թռչուն էր դառնում և հեռանում ՝ նորից գալու իրավունքով ։ Նրա փետուրները յուրօրինակ օրացույցի դեր էին կատարում, որը Մեծ Պասի յոթ շաբաթներին էին համապատասխանում։ Յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ փետուր հանվում էր։

Մեծ Պասի հենց առաջին օրն ամեն տուն թխում էր յոթ անալի բաղարջ՝ ի նշան պասի յոթ շաբաթվա։ Մեծ Պահքի ամեն կիրակի ուներ իր առանձին տոները։ Առաջին կիրակին նվիրված էր Արտաքսմանը, երկրորդը՝ Անառակին, երրորդը՝ Տնտեսին, չորրորդը՝ Դատավորին, հինգերորդը՝ Գալարյան, վեցերորդը՝ Ծաղկազարդին և յոթերորդը՝ Քրիստոսի Հարությանը։

Մեծ Պասի հեթանոսական ծիսակատարությունների շարունակությունն էին կազմում Ծաղկազարդի և Զատիկի տոնակատարությունները։

1.6. Ծաղկազարդ

Ծաղկազարդը Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է: Այդ օրվա ծիսական արարողությունների մեծ մասը նվիրված էր գարնան զարթոնքի և ցանքի նախապատրաստություններին։ Կատարվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի ,, Երուսաղեմ մտնելու օրվա,, Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենիներով, առավոտյան կատարվում է

ժամերգություն, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում են մինչև հաջորդ Ծաղկազարդ:

1.7. Սուրբ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը կոչվում է նաև Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեջքերից և վերադարձ առ Աստված: Աստծո Որդին իր արյունը հեղեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ:

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով կատարվում է գարնան գշերահավասարից և լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը:

Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը:

Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին. ,,Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Զատիկի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագից, որի ավարտից հետո տնետուն անցնելով՝ մարդիկ իրար հայտնում են Ս. Հարության ուրախաբեր ավետիսը՝ ասելով.

- **Քրիստոս հարյավ ի մեռելոց:**
- **Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:**

Մեր մանկապարտեզում մեծ ոգեւորությամբ և խանդավառությամբ ենք նշում Սուրբ Զատկի տոնը: Տոնի նախօրեին երեխաները իրենց ձեռքով գեղեցիկ գույներով նկարազարդում են ձվի կեղևը: Դաստիարակի օգնությամբ զարդարում ենք ,, Կենաց ծառեր,, ցանում ենք ցորեն, գարի, որը Զատիկի խորհրդանիշներից է: Սեղաններին

դնում ենք Սուրբ Զատիկի տոնին նվիրված ուտելիքներ՝ ներկված ձվեր, չամչով փլավ և այլն:

Կից ներկայացնում եմ նկարներ՝

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթի յուրացրած, ինքնադրսևորվելու ստեղծագործելու, որոնելու, հայտաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ծեսը որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է մանկապարտեզ, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Ծեսի յուրացման, կրթության ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝այսինքն մանկապարտեզից: Նախադպրոցական տարիքից երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը մեր ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այդ ամենը կրող և ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է , որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով:Այդ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան:

Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու: Այս ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին: Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ:

2.1. Ծիսական խաղերի իրականացում

Մենք գիտենք, որ խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Մենք ունենք պարզ ու գեղեցկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ մեծ արդյունք՝ երեխայի զարգացման հարցում:

Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, նոր տեղեկություններ ստանալ ու զարգացնել ունեցած հմտությունները:

Խ.Աբովյանը հաղորդում է մանկավարժներին ,, չզրկել երեխաներին անմեղ խաղերից,, իր ,, Պարապ վախտի խաղալիք,, աշխատությա մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկական խաղերի դերը: Մեծն Հ.Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը:

Ծիսական խաղեր, ծիսական գործողությունների միջոցով ծանոթանում է ազգային մշակույթին այլ դաշտի հետ, որտեղ միասին ներկայացնում են խաղը, երգը, պարը ծիսական գործողությունները:

Խաղը մարդկային գործողության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղի հիմնախնդիրները մշտապես հետաքրքրել է ոչ թե միայն հոգեբանների և

մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին ազգագրագետներին։

Ուշագրավ է նաև Պիաժեիու Կոֆկայի ,, երկու աշխարհի,, տեսությունը։ Ըստ նրանց երեխան երկու աշխարհ ունի՛ իրական աշխարհ և խաղային աշխարհը, որը պատկանում է երեխային։ Եվ քանի որ երեխայի հնարավորությունները, կարողությունները զարգացած չեն, նա այլ ելք չունի, քան խաղային աշխարհում ապրելը, այն երեխայի ստեղծած երևակայական աշխարհն է՝ ո՛չ ռեալ, ո՛չ իրական։

Ծիսական խաղեր կիրառելով՝ համոզվում են, որ իրոք ծեսը կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման, աշխարհընկալման ու հաղորդակցման համար։ Մանկապարտեզում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով։ Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- ստեղծագործելու կարողությունը
- հաղորդակցման կարողությունը
- շարժողականությունը

Թեմատիկ միջոցառումների կողքին այսօր իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Բարեկենդանը, Զատիկը, Տեառնընդառաջը։ Այս տոները վերածվում են հանդիսության՝ շնորհիվ գեղեցիկ, ուրախ երգերի։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Պարապմունք- Էկոլոգիական դասը
Խումբ- Ավագ
Թեմա- Պատրաստվում են Զատիկին
Նպատակը- Կծանոթանան Հայ Առաքելական եկեղեցու տոներին: Զրույց Սուրբ Զատիկի մասին: Զրույցի ընթացքում խոսում ենք ձվի, գինու, ձկան, չամիչով փլավի մասին, որոնք խորհրդանիշներ են Սուրբ Զատիկի
Անհրաժեշտ նյութեր- բամբակ, ցորեն, ափսեներ
Մեթոդներ- զույգերով, փոքր խմբերով

Ընթացքը՝

Յուրաքանչյուր սեղանի վրա դրված է ափսեներ երեխաների թվով, որի մեջ պետք է զանեն ցորենը:

<u>Խթանման փուլ</u>- երեխաներ ուշադիր ուսումնասիրեք ձեր առջև դրված ցորենը, ափսեները և բամբակը, այսօր պետք է ցանենք ցորենը, բայց մինչ այդ կասեմ հանելուկ, դուք պետք է գուշակեք ինչի մասին է.

Հողն է մթնում, մահանում,
Հետո նորից կյանք առնում,
Աչքը հառած երկնքին,
Տարածվում է շատանում:

Դաստիարակը ևս մեկ անգամ կրկնում է հանելուկը:

<u>Իմաստի ընկալման փուլ</u>

Հարց- Ինչի՞ մասին էր հանելուկը
Ի՞նչ կապ ունի ցորենը ձեր այսօրվա աշխատանքի հետ:
Լսել մի քանի պատասխան
Զատիկին ի՞նչ է խորհրդանշում ցորենը
Հարցնել մի քանիսին
Բացի ցորենից էլ ինչ են դնում զատկական սեղանին
Լսել մի քանի պատասխան
Ամփոփել պատասխանները:

Փոքր խմբերով սկսել ցանել ցորենը: Ափսեների մեջ դաստիարակի օգնությամբ կդնեն բամբակը, այնուհետև ջուր կլցնեն, հետո երեխաներից յուրաքանչյուրը պետք է ցանի ցորենը:

Ակտիվացնող վարժություն

Կշռադատման փուլ- աշխատանքի ո՞ր հատվածը քեզ դուր եկավ և ինչու՞: Մի քանի երեխաներին խնդրել, որպեսզի շրջեն սեղանների կողքով և ստուգել արդյո՞ք ճիշտ են կատարել առաջադրանքները:

Տնօրենի դիտարկում

Իմ կարծիքով դաստիարակը հասել է իր առջև դրված խնդրին։ Այս պարապմունքի միջոցով զարգանում է երեխայի խոսքը, ինքնասպասարկման կարողությունը, մանր մոտորիկան, խոսքը։ Երեխաները ստացան անհրաժեշտ գիտելիքներ։ Սուրբ Զատիկի մասին։ Ընդլայնվեցին Հայ Առաքելական եկեղեցու տոների մասին իրենց գիտելիքները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ուսումնասիրելով ազգայինն եկեղեցական տոների ու ծեսերի կազմակերպման հետ կապված գիտական գրականության և հիմնահարցի շուրջ մանկապարտեզում իրականացնելով հետազոտական աշխատանքներ՝ եկանք հետևյալ եզրակացությունների։

Այսօրվա աշխարհաքաղաքական մարտահրավերների պայմաններում ավելի է ուժեղանում ազգապահպանման, մատաղ սերնդի շշրջանում ազգային մշակույթի, կրոնի և գաղափարախոսության տարածումն ու արժևորումը։ Նախադպրոցականների գիտակցությանը պետք է հասցնել, որ հայրենասիրության մարումն անխուսափելիորեն հանգեցնում է հայրենիքի և ազգի ոչնչացմանը և որ հայրենասիրությունը սկսվում է հայրենիքի պատմությունը, նրա մշակույթն ու կրոնը լավ ճանաչելուց։

Ծիսական խաղերը և ծիսական գործողությունները նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության յուրահատուկ մի միջոց են, որոնք նպաստում են անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, ձևավորում էթիկական մտածողությունը և հարստացնում երեխայի աշխարհայացքը։ Ծիսական խաղերի, ծիսական գործողությունների միջոցով սանը ծանոթանում է ազգային մշակութային այլ դաշտի հետ, որտեղ միասին ներկայացնում են խաղը, երգը, պարը, ծիսական գործողությունները։

Գրականության ցանկ

1. Աս. Մնացականյան ,, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր,,
2. Վ.Հ.Բդոյան ,,Հայ ազգագրության /Համառոտ Ուրվագիծ ,, Երևանի համալսարանի,, հր. Երևան 1999
3. Ռիմա Ռստիկյան ,, Հայկական ծեսեր,,
4. Ռ.Հարոյան ,, Զատիկ,,
5. Ն.Մովսիսյան ,, Տոնացույց,,